

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**  
**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**  
**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**N 141/10**

**Քաղ. Երեւան**

**20 դեկտեմբեր 2010թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. դեկտեմբերի 20-ի նիստում քննարկման էր ներկայացրել հայտատու Արման Հովհաննիսյանի «Հղկանյութային կտրող սկավառակ» գյուտի (AM 20090141) փորձաքննության վերաբերյալ բողոքը:

Գյուտի հայտը մերժվել է հետեւյալ հիմքերով՝

Ստորեւ ներկայացված են 27.01.2010թ. եւ 09.03.2010 թվականներին փորձաքննության բաժնի կողմից ներկայացված հարցումների բովանդակությունները:

Փորձագետը առաջարկել է ճշգրտել «Հղկանյութային կտրող սկավառակ» գյուտի անվանումը, քանի որ ըստ ներկայացված նյութերի այն սարք է՝ խուլ և միջանցիկ անցքեր կատարելու համար: Առաջարկվել է ճշգրտել գյուտի անվանումը ըստ դրա նշանակության: Ինչպես նաեւ հիշատակված կտրող սկավառակը (ГОСТ 21963-82) չի կարող հանդիսանալ ամենամոտ նմանակ, քանի որ որպես գյուտի նմանակ նշվում է նույն նշանակությամբ լուծումը, որը հայտնի է մինչև գյուտի առաջնության թվականը հանրամատչելի դարձած տեղեկություններից («Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգ»-ի (այսուհետ Կարգի) 3-րդ գլխի 13-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերություն): Սկավառակը կտրող-հատող սարք է, իսկ հայտարկված սարքով անցքեր են կատարում: Ընդ որում նմանակներից յուրաքանչյուրը նկարագրելիս նկարագրության մեջ բերվում են նմանակի հատկանիշները, որոնցից հատուկ նշվում են հայտարկվող գյուտի էական հատկանիշներին համընկնող հատկանիշները, ինչպես նաև հայտատուին հայտնի՝ պահանջվող տեխնիկական արդյունքի ստացմանը խոչընդոտող

պատճառները (Կարգի 3-րդ գլխի 13-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերություն): Առաջարկվում է ճշգրտել գյուտի ամենամոտ նմանակը և համապատասխան փոփոխություններ կատարել նկարագրության «Տեխնիկայի մակարդակը» բաժնում: Ինչպես նաև նկարագրության «Գյուտի իրականացումը» բաժնում կառուցվածքային տարրերի թվային նշումները կատարվում են ըստ հիշատակման հաջորդականության, աճման կարգով, համապատասխան բառից՝ տարրի անվանումից հետո (Կարգի 3-րդ գլխի 24-րդ կետի 1-ին ենթակետ): Կառուցվածքի ստատիկ վիճակը նկարագրելիս պետք է հիշատակվեն բոլոր համարակալված տարրերը (մասնավորապես հիշատակված չէ ստորին աշխատանքային հիմքը (7)):

Հայտատուին առաջակվում է ըստ վերը նշվածի հայտի փաստաթղթերում ուղղումներ և ճշգրտումներ կատարել փոխարինող էջեր ներկայացնելու միջոցով:

2010թ. մարտի 9-ին փորձաքննության բաժնի կողմից ներկայացված հարցման մեջ նշված է, որ նախորդ փորձաքննության հարցմանը ի պատասխան 10.02.2010թ. հայտատուի կողմից ներկայացված նյութերում բացակայում է 27.01.2010թ. հարցման 1-ին և 2-րդ կետերի պատասխանները: 09.03.2010թ. փորձաքննությանը մեկ անգամ ևս կրկնել է իր հարցադրումները:

Բողոքարկողը իր բողոքում նշել է, որ փորձաքննությունը 09.03.2010 հարցմամբ առաջարկել է կիրառել փոփոխություններ, որոնք անիրագործելի են և չեն տեղավորվում հայտից բխող տրամաբանության մեջ: Մասնավորապես, հարցման մեջ առաջարկվում է փոխել նմանակը: Ինչպես կարող է փոխվել նմանակը, երբ գյուտը վերաբերում է կոնկրետ գործիքի, որը եզակի է իր տեսակի մեջ (ГосТ 21963-82) և գյուտը վերաբերում է սույն գործիքի ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացմանը:

Հայաստուն օգտագործել է իրեն հայտնի միակ նմանակը և եթե փորձաքննությամբ հայտնի է եղել այլ նմանակ, ապա այդ մասին փորձաքննությունը որեւէ հղում չի կատարել:

Հայտատուն հարցման պատասխանի (27.03.2010) մեջ նշել է սույն հակասությունների մասին: Սակայն փորձաքննությունը, անտեսելով հարցման պատասխանը, 15.04.2010 նոր հարցման մեջ շարունակել է պնդել իր պահանջները:

Հայաստուն կրկին իր պատասխանի մեջ մանրամասնորեն պատասխանել է փորձաքննության առաջադրած բոլոր հարցերին: Սակայն 18.06.2010 և ապա 07.09.2010 փորձաքննությունը որոշում է կայացրել գյուտի հայտը համարել հետ կանչված, համապատասխան ժամկետում փորձաքննության հարցմանը չբավարարելու պատճառով:

Որպես ամփոփում իր բողոքի բողոքարկողը խնդրում է փորձաքննության որոշումը համարել իրականությանը չհամապատասխանող: Քանի որ, հայտատուն համապատասխան ժամկետներում ներկայացրել է փորձաքննության հարցման պատասխանները, որոնք սակայն վերաքննությունը անտեսել է:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 24.11.2009թ. հայտ է ներկայացվել «Հղկանյութային կտրող սկավառակ» գյուտը արտոնագրելու նպատակով: Փորձաքննության բաժնի կողմից մի քանի անգամ հարցում է կատարվել, ակնկալելով երեք հարցերի պատասխան, սակայն հայտոտուն այդ հարցերից մեկին պատասխանել է, իսկ մյուս երկուսին ոչ՝ պատճառաբանելով որ ներկայացվել է իրեն հայտնի միակ նմանակը եւ եթե փորձաքննությանը հայտնի է այլ նմանակ ապա փորձաքննությունը ինքը ներկայացնի եւ փորձաքննություն անցկացվի դրա վերաբերյալ: Դրանից հետո փորձաքննության կողմից ներկայացվել է ծանուցում, որով զգուշացվել է հայտատուին այն մասին, որ եթե պահանջված հարցման պատասխանները չստացվեն, ապա հայտը կհամարվի հետ կանչված: Կոլեգիան առաջարկեց բողոքը մերժել:

Ընդհանուր քննարկման արդյունքում՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 67-րդ կետի 4-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

Մերժել Արման Հովհաննիսյանի «Հղկանյութային կտրող սկավառակ» (հայտի համարը՝ AM 20090141) գյուտի փորձաքննության վերաբերյալ բողոքը եւ փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի  
նախագահ

Ա. Ազիզյան

